Նախարար Ն. Ռամիշվիլին Հայաստանի, Ազրբէջանի և Լեռնականների կառավարութիւններին ուղղեց հետևեալ դիմումնագիրը.

«Արդէն հասել է այն վայրկեանը, որ Անդրկովկասի և Կովկասի կառավարութիւնները, լցած փոխադարձ վստահութեան ոգով, իրար օգնութեան գալու պատրաստակամութեամբ և միմեանց անկախութիւնը ընդունելով՝ հանդէս դան փոխադարձ օգնութեամբ և համերաշխութեամբ իրականացնելու ապագայ վեհաժողովին ստեղծուած հանրապետութիւնների ճանաչումն ու փոխադարձ շահերի պաշտպանութիւնը, ինչպէս և լուծելու բոլոր վիճելի հարցերը, դրանց թւում և սահմանների հարցը՝ շահագրգռուած պետութիւնների համաձայնութեամբ կամ, եթէ այդ անցնի ապարդիւն, իրաւարարութեան միջոցով, և մշակելու փոխադարձ այնպիսի պարտաւորութիւններ, որոնց ուժով ոչ ոք իրաւունք չունենայ որև է պետութեան հետ համաձայնութեան մէջ մտնել՝ ի վնաս խորհրդաժողովին մասնակցող ժողովուրդներից որև է մէկի:

Այս նպատակով վրաց հանրապետութեան կառավարութիւնը առաջարկում է Ազրբէջանի և Հայաստանի հանրապետութիւններին ու Հիւսիսային Կովկասի Լեռնական Ժողովուրդների Միութեան կառավարութեան՝ անհրաժեշտ լիազօրութիւններով երկուական ներկայացուցիչ ուղարկել Թիֆլիս, սոյն թւի նոյեմբեր 10-ին, ցերեկւայ ժամը 12-ին՝ արտաքին գործոց նախարարութեան շէնքում կայանալիք խորհրդաժողովին մասնակցելու համար:

Վրաց հանրապետութեան կառավարութիւնը որոշել է խորհրդաժողովի քննութեան դնել հետևեալ հարցերը.

1. Խորհրդաժողովին հրաւիրուած պետութիւնների անկախութեան ճանաչումը փոխադարձաբար:

2. Վիճելի խնդիրների, որոնց մէջ և սահմանավէճերի լուծումը՝ փոխադարձ համաձայնութեամբ կամ իրաւարարութեամբ:

3. Փոխադարձ պարտաւորութիւն՝ չկայացնելու համաձայնութիւն որև է պետութեան հետ ի վնաս խորհրդաժողովին մասնակցող պետութեանց:

4. Համերաշխ և փոխադարձ վստահութեամբ հանդէս գալ համաշխարհային վեհաժողովում հանրապետութիւնների անկախութիւնը ճանաչել տալու և ընդհանուր շահերը պաշտպանելու նպատակով»:

Այս դիմումը տարօրինակ էր թէ՛ ըստ ձևի և թէ բովանդակութեամբ. վրաց կառավարութիւնը որոշել էր խորհրդաժողովի օրակարգը, կազմը, տեղն ու ժամը և ուղարկում էր իր հարևան պետութիւնների կառավարութիւններին ի գործադրութիւն: Այդպէս կարող էր վարուել մի նահանգապետ իր ստորադաս գաւառապետի հետ, բայց անհանդուրժելի էր անկախ պետութիւնների փոխյարաբերութիւնների մէջ*): Եւ հասկանալի է, որ այդ գրութիւնը Երևանում ընդունուեց զարմանքով ու վրդովմամբ:

Հայերը ունէին դժգոհելու և ուրիշ պատճառ. Ռամիշվիլին ինքնագլուխ օրակարգի մէջ էր դրել և «սահմանավէճերի լուծումը»: Երևանում համարւում էր կասկածից դուրս, որ վրացիներն ու թուրքերը միացած,

*) «Ռամիշվիլիի ստորագրած «հրաւիրագրի» ոգին, բնորոշում է Աւալովը, մի քիչ··· ներքին գործոց նախարարի շրջաբերականն էր յիշեցնում»: